եղբօր, և բարկացեալ այրն ոչ կարէ գործել բարի, վասնորոյ լրբութիւն և անզգամութիւն արանց առաջի ատենի ամենայն դատաստանի համարեսցի իբր մեղք արժանի պատժոյ, եթէ հարուստ, հատուցանել տուգանս 'ի տունն աղքատաց, եթէ աղքատ մտանիլ 'ի բանտ, այլ եթէ աղքատ և երիտասարդ հարկանել գանս։

ԳԼՈՒԽ ՅՂԵ.

Օրէնս հայոց հրամայեաց 'ի վերայ ամենայն քրիստոնեայ ժողովրդոց իւրոց զի յաւուրն կիրակէի մտցէ 'ի տուն Տեառն և ընդունեսցի շնորհ Սուրբ պատարագի, այլ զօրականքն հայոց եթէ 'ի մէջ քաղաքաց և եթէ 'ի յերեսս դաշտի ներքոյ վրանաց բնակօղաց, իւրաքանչիւր դունտ որում տեղի և 'ի հրամանի որում սպարապետի որ իցեն, յաւուրն կիրակէի պարտ է զօրագլուխն նոցայ բոլոր զօրքն իւր երիս բաժինս բաժանել և երիս անգամ մուծանել 'ի տունս Տեառն վասն աղօթելոյ։

1 բաժին առաւօտէն 7 ժամին։
1 » » 9 ժամին։
1 » » 11 ժամին։

Զի ամենայն ժամ երկու 'ի երիս բաժնոյ զօրաց մնասցեն 'ի տեղի իւրեանց պատրաստ և մի ի երից բաժնոյ որ ելանէ 'ի յաղօթս պարտ